ԿԱՐԾԻՔ

Ռաֆայել Գառնիկի Հարությունյանի “Integrative Study of Media Discourse (with special reference to English political speech)”/ “Մեդիա դիսկուրսի համակցված քննություն (անգլերեն քաղաքական խոսքի փաստական նյութի հիման վրա)

Ժ. 02.07. - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ռաֆայել Հարությունյանի աշխատանքը նվիրված է անգլալեզու մեդիա դիսկուրսի համակցված քննությանը:

Մեր օրերում անհնար է գերագնահատել մեդիայի ազդեցությունը հասարակության վրա: Բազմաթիվ են միջոցները ներկայացնելու միևնույն նորությունը, մասնավորապես՝ քաղաքականը, և ոչ միշտ է ակնկալելի վերջինիս անաչառ և անկողմնակալ մատուցումը: Սույն միջոցները կարող են լինել ինչպես բացահայտ, այնպես էլ քողարկված՝ լեզվական միավորների արհեստավարժ մտաշահարկմամբ: Մեդիա դիսկուրսի աննախադեպ կարևորությունը և դերը ժամանակակից աշխարհում անկասկած հիմանվորում է սույն ատենախոսության արդիականությունը՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ գործնական օրինակների վերլուծությունը կատարվել է մերօրյա անգլալեզու մեդիայից:

Ատենախոսը իր աշխատանքի նորույթը պայմանավորում է այն հանգամանքով, որ առաջին անգամ փորձ է արվել կատարել մեդիա տեքստերի քննադատական վերլուծություն՝ ելակետ ընդունելով լեզվական մտաշահարկումը՝ լեզվի բոլոր մակարդակներում՝ չսահմանափակվելով միայն այս կամ այն ասպեկտով: Նպատակ ունենալով իմաստային, քերականական, գործաբանական, ոճական քննության միջոցով ուսումնասիրել անգլալեզու մեդիա խոսույթում քաղաքական խոսքի լեզվական մտաշահարկման հնարավոր դեպքերը, առաջադրվել են մի շարք խնդիրներ, ինչպիսիք են ուսումնասիրել անգլալեզու քաղաքական մեդիա խոսույթում լայն կիրառություն ունեցող լեզվական միջոցները իմաստային,

գործաբանական և ոճական մոտեցումների ողջ գործիքակազմով, քննության ենթարկելով անգլալեզու քաղաքական մեդիա խոսույթի վերնագրային դաշտը՝ բացահայտել լեզվական այն մակարդակները, որոնք լեզվական մտաշահարկման և ընթերցողի վրա գործաբանորեն ազդեցություն գործելու առավելագույն հնարավորությունն են տալիս, ուսումնասիրել անգլալեզու քաղաքական մեդիա խոսույթը տեքստի լեզվական, արտալեզվական և հարալեզվական բաղադրիչների քննության համակցված մոտեցմամբ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլուխը, բաժանված լինելով երեք ենթագլուխների, ներկայացնում է մեդիա-քաղաքական դիսկուրսը որպես տեսական ուսումնասիրության առարկա : Երկրորդ գլուխը բաժանված է հինգ ենթագլուխների, որոնցում ներկայացվում է մեդիա խոսույթում քաղաքական խոսքի լեզվական մտաշահարկման օրինակների վերլուծությունը:

Քննարկմանը ներկայացված ատենախոսությունը միանգամայն ինքնուրույն, և արժեքավոր ուսումնասիրություն է: Հեղինակը պատասխանատու և մանրակրկիտ ձևով ուսումնասիրել է հետաքրքրություն առաջացնող փաստական նյութը, ինչն անշուշտ գովելի է : Աշխատանքը գրված է պատշաճ գիտական մակարդակով և մեր կարծիքով նոր խոսք է համպատասխան ոլորտում :

Այնուամենայնիվ, բնավ չցանկանալով նսեմացնել աշխատանքի արժեքն ու նշանակությունը՝ կցանկանայինք ներկայացնել մի քանի դիտարկումներ և առաջարկներ.

- Դիտարկելով Փրեսթոն Նիի հոգեբանական մտաշահարկման տեսակները /էջ 28/ `դրանցից մեկը, որը բնորոշվում է որպես <<առավելություն անձնական տարածքում>> (Home court advantage), նշում եք, որ սա առավելություն է մտաշահարկողի համար : Խնդրում եմ պարզաբանեք մտաշահարկման այս մեխանիզմը, այսինքն ինչպես է իրացվում մտաշահարկման գործընթացը և որն է դրա ազդեցությունը մտաշահարկվողի վրա :

- Ձեր վերլուծության մեջ անդրադարձ եք կատարել digits to the left մարքեթինգային մարտավարությանը /էջ 51/: Խնդրում եմ մանրամասնեք սույն մարտավարության և լեզվական վերլուծության կապը մտաշահարկման դիտանկյունից:
- Ձեր բերված հետևյալ օրինակը *Putin tells Macron Russia will reach aims through "negotiation or war"* /էջ 52/ վերլուծելիս՝ նշում եք, որ ոճական խտացումը (stylistic condensation) բնորոշ է մեդիա-քաղաքական դիսկուրսին: Բնականաբար, դա, ինչպես նաև ոճական հակիրճությունը մեդիայի ամենաբնորոշ առանձնահատկությունն է, որը ոչ միայն լեզվական տնտեսման, այլև ճշգրիտ տեղեկություններ փոխանցելու միտում ունի: Այդուհանդերձ, ցանկալի կլինի բացատրեք, այս երևույթի և լրագրային մտաշահարկման կապը վերոնշյալ օրինակում:

Նշված կետերը ամենևին չեն նսեմացնում ատենախոսության արժեքը, և Ռաֆայել Գառնիկի Հարությունյանի «Մեդիա դիսկուրսի համակցված քննություն (անգլերեն քաղաքական խոսքի փաստական նյութի հիման վրա) ատենախոսությունը լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հոդվածներն ու սեղմագիրը արտացոլում են վերջինիս հիմնական բովանդակությունը: Ասվածը հիմք է տալիս ինձ միջնորդել գիտական աստիճան շնորհող 009 մասնագիտական խորհրդի առջև Ռաֆայել Գառնիկի Հարությունյանին շնորհելու հայցվող աստիճանը Ժ. 02.07. – (Ռոմանագերմանական լեզուներ) մասնագիտության գծով:

Ք. Մ. Հարությունյան
բ.գ.թ. դոցենտ

Հաստատում եմ բ.գ.թ. դոցենտ
Ք. Մ. Հարությունյանի ստորագրությունը

ԵՊՀ գիտքարտուղար
Մ. Հովհաննիսյան